

ԱՐԵՄՏԱՏԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱԳԵՐԸ ԽՐԻՄԵԱՆ ՆԱՅԻԿԻՆ

1895-96 թթ. «Ղզրի դեպքերից» շատ առաջ թուրքական իշխանությունների խնացությամբ թուրք հարկահաւարները, ոստիկանները, քուրդ աղաներն ու համիդիները կողոպտում էին քրիստոնեաներին, մասնատրաբար հայ գիղացիներին, դիմում զանազան սադրանքների, հարածում, սպանում: Գնալով անարանների էր դառնում կեանքը Արեւմտեան Նայասարանում: Եւ գիղացիները ստիպուած էին լքել հայրենի եզերքը, փախչել Արեւելեան Նայասարան:



ՄԿՐՏԻՉ ԱԽՐԻՄՅԱՆ

Սյորբե հրապարակուող նամակների հեղինակները Խրիմեան Նայրիկին են դիմում Բաթումից, նկարագրում իրենց անարանների վիճակը Երկրում: Այսպէս նկարագրուող կամայականությունները բազմաթիւ են, եւ հարստահարիչների խօսքից երևում է, որ նրանք շարժում էին կառավարական մարմինների խնացությամբ կամ թելադրանքով: Կո. դոպրեկուց, նսեմացնելուց յետոյ խրոխտալով սպանում են. «Ասկից գիւրցէք, որ դուք աշխարհիս մէջ արեւ պիտի չը տեսնէք, գաւուրլար (անհաւարներ)»: Կամ՝ խանութից ապրանք են վերցնում, եւ երբ վաճառողը դրամ է պահանջում, դարձեալ հոխորտում են. «Գեաւուր, մենեւ սրա՞կ կ'ուզէք... հալլա ինչեք պիտի տեսնաք մեր ձեռքերէն»: Իսկ տուժածները բողոքելու տեղ չունէին. իշխանութեան ներկայացուցիչները անարարբերութեամբ էին լսում նրանց: Արեւմուտեան մէկի դարերը. ի պարսախան բողոքի՝ ասում են. «Գեաւուր, մի՛թէ քո աղջկայ պահապանն եմ»:

Սրանք փաստաթղթեր են, որ անկողի անգամ ցոյց են տալիս հալածանքների ծրագրուած լինելը:

Նամակները պահում են Ե. Չարենցի անուան գրականութեան եւ արուեստի թանգարանում (Մարգիս Բամալեանի ֆ. ք. 13, թթ. 204, 205, 203, 209, 216, 217, 214):

ԱՐՄԵՆԷ ԱՍԱՏՐԵԱՆ

1.

11 փետրուարի 1895 թ.
Ի Բաթում

ԱՄԵՆԱՎԵՏԱՓԱՆ ՏԷՐ
ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄԵԱՆ ՆԱՅՐԻԿ

Ի ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆԱՅՈՑ ԼՈՒՍԱԲՈՐՉԱԿԱՆ ԱԹՈՌՈՒՆ
ՍՐԲՈՅՆ ԷՋՄԻԱՇՆԱՅ

Ո՛վ սուրբ Վեհափառ Հայրիկ, արտասուալի աչօք եւ անարժան բերանովս հիս տերութեան Աշա-
րի կողմէն գաւառիս մի քանի բառերով ցաւեր յայտնել: Յուլիսի 20-ին գիւղերնիս մագաթ կը ձգեն՝
ասկից-անկից կաշառք առնելով: Գիւղերնիս հազիւ թէ հոկտեմբերին ցորեն կը ծախուի, երբ մոլթագմ-
ներ գիւղերնիս կու գան տաս ձիաւորով կամ 5-7 եւ այլն: Նախ եւ առաջ տափտար կ'ուզեն գիւղի
ռեսէն, ռեսն տափտար ցոյց կու տայ: Անմիջապէս կը բանին տափտար, կը պատուին՝ Մենք չենք ըն-
դունի ձեր տափտար՝ սուտ է: Կ'եղեն կալեր կը պտտին առանց ըռեսի եւ մէջլիսի խօսքով. ամեն մեծ
կալէն երեք սոմար կամ երկու սոմար, ամենափոքրէն մէկ սոմար ցորեն, տասանորդէն խզար կ'առնին:
Այնպէս շարած կը մնան ժողովուրդ, ոչ աշնան ցանք կրնեն եւ ոչ բլղուր կը խաշեն: Անտարակոյս է,
որ մըր երկիր ձմեռը շուտ կը կոխէ: Եթէ շաբաթներուց երկու կամ երեք շաբաթ կ'ելնէ, նոր կալեր կը
չափին: Երբ որ ալ կալեր կը չափին, տէրութեանն իրաւունքն է ութ ու կէսէն մէկ, իրենք ութէն մէկ
կառնին: Ամեն չափից մէկ կող ցորեն հազողի գին կ'առնեն եւ մէկ կող ցորեն իրենց ռեսին:

Ո՛վ կարող է չտալ, երբ մոլթագմներ կալին կ'երթան, խեղճ գիւղացին իր ընտանեաց հետ լալով
մէկտեղ տուն կ'երթայ...

Ի Խնուսայ Հարոս գիւղացի
Գրիգոր Ավագեան
Որ կը մնամ ի Բաթում, Պերվոյէ չասարի դիմաց
Խլածի Դավրեթի օթախ

2.

8 փետրուարի 1895 թ.
Ի Բաթում

ԱՄԵՆԱՎԵՏԱՓԱՆ ՏԵԱՌՆ ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄԵԱՆ ՆԱՅՐԻԿ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆԱՅՈՑ ԼՈՒՍԱԲՈՐՉԱԿԱՆ ԱԹՈՌՈՒՆ ՍՐԲՈՅՆ ԷՋՄԻԱՇՆԱՅ

Վեհափառ Հայրիկ, հիմա կը սկսիմ Հարոս գիւղի մեծ կողոպուտներ մի ըստմիտջ պատմիլ:

Առաջին, էն ճպրանցի Մահմուդ էֆենդի եղբայր Սաբդին եւ իր եղբայր Հիւսէյն մի անգամ
իրենց ծառաներով քսան ձիաւորէ բաղկացեալ մի խումբ մեր գիւղի նախրի վրայ յարձակեցան, 120
հատ կով ընտրեցին տարան, մենք գիւղացիքս հտեւներէն ինկանք գնացինք եւ կառավարութեան
բողոքեցինք: Մահմուդ էֆենդին, որ աչայի մէջլիստ էր, մեզի ըսաւ, մի'թէ ես ձեր գողն իմ, մեզի հայ-
հոյեց կառավարութեան մէջ:

Մենք դարձանք եկանք մեր տուն:

Երկրորդ, Ավագեան Գրիգորի գութանի վրայ յարձակեցան տաս ձիաւոր, ճպրանցի քիւրտեր,

Մահմուդ աֆանդու եղբայր Սապրին իր ծառաներով, Գրիգորի եղբայր Գէորգ վիրաւորեցին, մշակ փախաւ, եւ հոտաղ փախաւ դէպի գիւղ հաւար բերելու: Ալաթուրքիա սահաթ տասին մենք մինչեւ գնացինք հասանք Թորոման գիւղ, մութ կոխեց, եւ եզներու պոչեր կտրած ճանապարհին ձգած: Ահա ձեզի ճանապարհ, թէ որ քաջ էք, եկէք: Եւ գնացինք, կառավարութեան՝ մտիկ չըրաւ:

Երրորդ, Քոնոխան Ալոյի երեք ձին ճալրանցի Ըզմային աղէն վեց ձիաւորով նախրի վրայ բռնեց տարաւ: Մէկալ նորէն Ըզմային աղէն Քոնոխան Ալոյի տաւարի վրայ բռնեց, վեց ձիաւորով առաւ եօթ եզ, տարաւ չորանին:

Մենք ալ՝ գիւղացիք, ետիւ ընկանք եւ հասանք, մենք փայտով, անոնք ալ հրացանով, անոնք զարկեցին, էնկէի տղայ Աբդալը վիրաւորեցին քթէն: Ժամ 10-ին ետ դարձանք, եկանք գիւղ:

Ընչտ այն օր, Փայիկ գիւղի կողմէն Մահմուդ աղայի ծառաներ հինգ ձիաւորով հարձակեցան Տէր Մովսէսի լծոց վրայ եւ եզներ տարին (չորս եզ): Ասանկով թշուառութիւն եւ հարստահարութիւն ամեն կողմէն գիւղ տիրեց:

Մալախու լաճ, Ամաղ աղի մարդիկ էնկէեան Աւդալի գոմի վրայ բռնեցին յիսուն հատ մաքի, տարին: Մկէյեան Օհանի գոմի պատը ծակեցին, տարին երեսուն հատ մաքի: 50 հատ ոչխար Աւազի Գրիգորին, տասը մաքի Գրիգորի Սարգսին, քսան հատ Առաքելին, երեսուն հատ ուստա Մարտէին, տասը հատ նորա եղբայր Մոսոյին, 200 հատ ալ միւս գրացիներու, նոր հարկ չէ անուններ նշանակել: Ասոնց բոլորին ընողն էին Ամաղ աղայի մարդիկ, որը աղայի մէջլիսն է:

Քառասուն բարդ ցորեն մէկ անգամէ Մարտօ, Սրքոյին վառեցին Ամաղ աղայի մարդիկ: Երեսուն բարդ ցորեն Աւազի Գրիգորին վառեցին Ամաղ աղայի մարդիկ, քառասուն դէզ խոտը մէկ անգամէ վառեցին Ամաղ աղայի մարդիկ: Չորս հարիւր բարդ ցորեն թէ քաղած եւ թէ առանց քաղած տարին արտերէն գիշերով, ամեն օր հինգ հարիւր բարդ խոտ գիշերով իշակներ լծած կտանէին: Նորէն Ահմադ աղայի մարդիկ... Մէջլիսներ կերթայինք կառավարութեան բողոքելու, հայերուս դուրս կընէին: Ասի՝ Մէկ տարւան վնասն է, ո՛ր կըրենք: Ամեն տարի մեր վիճակ այս է եղել:

Անցեալ տարի մենք Ճոճոյեան գերդաստանէն Մարտիրոս անունով կտրիճ երիտասարդ մի գիւղիս պահապան բռնեցինք: Մէկ գիշեր Ամաղ աղի մարդիկ 15 մարդով Պետէյեան Առաքելի տան մառնի պատ ծակեցին, միջի եղածները կողոպտեցին տարին, գիւղիս պահապան վրանէն հանդիպելով, բռնեցին զինք աչքին վրայ հրացան դնելով գլխու ետքէն դուրս տաւ, մինչեւ որ գրացիները հասան, դիակը գետին տեսան փռւած:

Այս տարի Սասնոյ վրայ կառավարութեան կողմէն զօրք ղրկւելով Հիւսէին փաշայի համրդիէ զօրքեր երկու գիշեր գիւղիս մէջ ինչ անգթութիւններ որ չը գործեցին եւ շատ մեղրի փէթակ ջարդելով, կնանեաց նամուսին դիպչելով բռնի: Յետոյ ո՛չ գարի, ո՛չ ցորեն թողեցին, ձիերուն տւին: Օղաներու եաթաղներ առին Մուշ քաղաք տարին: Նմանապէս կանոնաւոր զօրքերու ըրածները անպատմելի է, որովհետեւ գիւղը ճանապարհի վրայ է: Հարիւր տուն հայ ըլլալով հիմա հազիվ թէ տաս կամ տասնհինգ կը գտնուի մէջ, գաղթեցին օտար երկրներ:

Ուստա Մարտիրոս եւ իր եղբօր որդին Կարապետ, մի գեղեցի Կարապետ անունով Վասակէ մը մատնւան: Կառավարութիւն գիրենք բռնեց, զրկեց Կարին: Եղբօր որդին՝ Կարապետը, բանդին մէջ մեռաւ եւ Մարտիրոսն ալ մինչեւ հիմա բանդը կը կենայ: Ասանկով ամեն մարդ ասդին-անդին թափառական եղած են իրենց հայրենիքէն, ասանկ է բոլոր հայուս վիճակ:

Մնամ սպասու քոյի սուրբ Վեափառութեան
Խ. Ծ. Գրիգոր Աւագեան եւ Մկրտիչ Գրիգորեան

Դարձեալ գիւղիս մէջ մեր կըրած անտանելի չարչարանքներէ: Թէ կանոնաւոր զօրքէն եւ թէ

ժանդարմաներէն ասոնք, որ Հարկի ժողովող էին տէրութեան կողմէն, ամեն անգամին Հինգ կամ տասն ձիաւորով կու գային գիւղիս մէջ, ամեն մարդուն երկուական հաւ մորթէն, եթէ հաւ չըլլար երկու մարդու մէկ գառ եւ մէկ ձիուն մէկ արչըմա կոտ գարի կու տային: Մինչեւ որ մէկ կամ երկու ոսկի չառնէին, չէին երթա: Որուն որ մալ կար, կէս գնով կը ծախէր, տուրք կու տար, իր անձ ազատելու համար: Որուն որ չը կար... խեղճերու տներ կ'երթար, իրենց տակի քեչաներ կամ վրայի կարպետներ քաշէր, կը բերէր, որոնց տուն, որ ալիւր կամ բլդուր մէկ կամ երկու կող գտնէր, կը ժողվէր մէկտեղ եւ կը տանէր: Խեղճերուն խապան կը զրկէր, կառավարութեան աչքի առաջ կը ծախէր տուրքի համար, որոնց որ բան չը գտնէր, սեան կապելով կը ծեծէր եւ երեսներ մուր կը քսէր: Եւ կըսէր՝ Ասկից գիտցէք, որ դուք աշխարքիս մէջ արեւ պիտի չը տեսնէք՝ գաւառը լրացնելով: Թող որ գիւղս ճանապարհի վրայ ըլլալով անց եւ դարձ եկող կանոնաւոր զօրքի, համրիւրայ քիւրաի ըրած անգիտութիւններ անպատմելի այլեւս հարուցի:

Գրիգոր Ասագեան

3.

ՆՈՐԻՆ ՕԾՈՒԹԵԱՆ ՍՐԲԱՋՆԱԳՈՅՆ ՎԵՏԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԱՂԵՐՍԱԳԻՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ի բնակչէ Վան գաւառի Կարմունջ գիւղի
«Ավարթի» Մելիոն Յովհաննիսեանի
Ալեքսան Ապրուզեանի

Սասնոյ կոտորածից յետոյ Համրիւրայ կոչւած զօրախումբ մի յարձակելով մեր գիւղի, ուզեց թալանել, բայց պատճառ չը գտնելով իրանց թալանի լրնումը տալու, քանզեց մեր եկեղեցու տաճարի հիմքը, որպէս թէ պահեստի գէնքեր կան դրւած Սասուն գրկելու եւ իրանցից մի հրացան ծածուկ կերպով դրին եւ յետոյ քայքայելիս հիմքը, դուրս հանեցին իբրեւ հայերի պատկանող, այն ժամանակ բռնի կերպով ամենայն չարութիւն ի գործ դրին: Բացի դրանից, իսկոյն տարան բանտարկեցին նոյն եկեղեցու քահանային եւ գիւղական բոլոր զատաւորները, որոնց պահեցին մի շաբաթ եւ, կաշառւելով բավականին բանտարկեալներից, դուրս թողեցին, սպառնալով, որ միւս անգամ, եթէ գէնք գտնուի, այն ժամանակ գիւղը բոլորովին հիմնայատակ կ'անենք:

Եւ ինչ կարող էինք ասել կամ ում դիմէինք: Մեզ... թուրքն էլ չէր լսէ՝ մեզ որպէս մարդասպան «գեաւուր» ճանաչելով: Դորանից ետ, բոլոր համրիւրի զօրագունները գնացին «Ծաղկէ գիւղ», բոլոր ոչխարները տարան գոռաքի դուրս արին ընդդիմանողին, մահաւան հարւած սպառնալով, իսկ «Սփռածորի» հարուստների տները եւ ոչխարները բոլորը տարան, իսկ աղքատները միմիայն ոչխարները:

Ինչքան դիմումներ մտածեցինք, բայց ում... մերը չկայ... մեզանից դառն արտաւազին խորհուրդները մէջ է ընկղմւած եւ լայնածաւալ ալեաց հոտանքների վերայ մարտ է մղում: Միայն նա է, որին սպասում ենք եւ ներկայ է:

Ձեր խոնարի ծառայ եւ հարազատ որդի Մելիոն Յովհաննիսեանի
Ալեքսան Ապրուզեանի

4.

9 փետրուարի 1895 թ.
Ի Բաթում

ՆՈՐԻՆ ՎԵՆԱՓԱՈՆ ՆԱՅԻՐԿԻ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ
ՏԵՐ ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ

Սոյն խնդրագիրը կը փութամ ներկայացնել Ձեր Վեհափառութեանը, Տարօն գաւառից Յրոնք գիւղացի Մ. Պետրոս Գրիգորեանց:

Տաճկաց ճնշումների մասին: Մութագիծների վարկը

Երկրիս բնակչոյ Հայերը սովորաբար երկրագործութեամբ կը զբաղին եւ ոմանք ալ բոստաններ ցանելու սովորութիւն ունին: Կալսի ժամանակ Մշո մէջ բնակվող տաճիկ խապիլ սահապներէն մութագիծներ կը զրկէին տէրութեան կողմէն գիւղերու մէջ: Յիշեալ խապիլ սահապներ չորս մասի կը բաժանէին: Ա. Զեյնիկլի, սոցա գլխաւորն է Սահլէ աղան: Բ. Իսալի, սոցա գլխաւորն է Հաճի Ամար: Գ. Քոզանլի, սոցա գլխաւորն է Ալիբազման խոճէն: Դ. Թոպանլից, գլխաւորն է Թեյօ աղան, որ Հարիւրապետ էր: 87 թւին Իսալից խապիլէն, Մահմադ աղան եանա կարգւեցաւ գիւղին: Տասը մարդիկներով եւ տասը ձիերով գիւղ եկաւ, իրենց ուտեստը գիւղացիներու քսակէն. ամեն օր լաւ կերակուրներ ու իրենց ձիերուն ալ օրական երկու անգամ գարի կու տային. իւրաքանչիւր ձիուն մէկ-մէկ չափ, կալեր չափելու ժամանակ, ոմանց երեքէն մէկ, ոմանց հնգէն եւ ոմանց ալ վեցէն մէկ հասկը կը վերցնէր: Իսկ օրէնքի համաձայն տասնէն մէկ վերցնելու էր: Նոյն ժամանակին Մալեցեան Գասպար, Շահոյեան Սաֆար, Ըսքերեան Զաքար եւ Մեքրոնեան Հլղաթ ձմերուկի բոստաններ ցանել էին: Իւրաքանչիւր բոստանի արժողութիւնն էր Հարիւր դուրուշ, ինքը իրեն խանչալի գորութեամբ ամեն մէկ բոստանէն վեց Հարիւր դուրուշ թահլիւր առաւ, բոստաններ իրանց ունեցածը ծախելով հազիւ կարողացան նորա պահանջածը վճարել եւ թողնելով իրենց բնտանիքը՝ օտարութեան դիմեցին աշխատելու: Ոչ թէ մէկ մարդու կամ երկու մարդու վնասին, այլ ամբողջ գիւղին: Նորա պատճառով այն տարիէն մինչեւ այսօր բոլոր գիւղացիներ կիսրար ցանկ կընէին կրկին տաճիկներուն:

Հարկապահանջներ. Հաճիդալիգեան Մահմադ էֆենդին եւ Բաշիր աղէն, որ Հարիւրապետ է, իրենց զօրքերով հրաման եղած է տէրութեան մօտէն Մշոյ շրջանի բոլոր գիւղերէն հարկ պահանջել: Նոքա տաս բնիկներով եւ ձիերով գիւղը կու գան օրական երեք անգամ: Իւրաքանչիւր մարդուն մէկ-մէկ հաւ կու տայինք եւ իւրաքանչիւր ձիերուն մէկ-մէկ չափ գարի: Տասն օր գիւղն կը կենայ, փարա չունեցողը գոմերուն մէջ բանդ կը դնէ եւ վերջէն սաստիկ ծեծի կ'ենթարկէ: Ո՛վ ունի ստակ, բոլորն ալ չունին: Ուրեմն բոլորն ալ այդ տանջանքը կըրելու են, եւ երբ որ բողբոջելու կը դիմենք, բնաւ լսելու չեն: Ասոնցմէ Տաֆար եւ Ռահմոն կ'առաջարկէին, թէ ով որ փարա չունի, իրեն կինը մեր մօտ գրաւ կընէին. թող տա, մենք կու տանք փարայ, տայիք տէրութեան: Այս տեսակով բոլոր գիւղացիներ վերջին աստիճանին հասնելով, ամենքն ալ աղքատացած, աղքատագոյն կը կոչւին եւ իրենց ու իրենց մնացած հինօրեայ բռնած տները քանդելով՝ վրայի փայտերը տարին Հարկին տեղ: Միւրդոյեան Կարապետին, Կրպոյեան Գրիգորին, Քոչքեան Մարտոյին եւ այլն: Սոքա բաց տներու մեջ են բնակուած՝ մերկ ու անօթի: Շատ անգամ ալ կին մարդիկներ կը տանի բանդ դնէ:

Մահպետի Պետրոս Գրիգորեան

5.

ԱՄԵՆԱՎԵՆԱՓԱՌ ՏԷՐ ՏԷՐ
ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄԵԱՆ ՆԱՅՐԻԿ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ
ԼՈՒՍԱԴՈՐՉԱԿԱՆ ԱԹՈՌՈՒՄԸ ՍՐԲՈՑՆ ԷՋՄԻԱԾՆԱՅ

Հիմայ Վեհափա՛ռ Հայրիկ, մի քանի տեղեկություններ պիտի ծանուցանեմ Սրբութեանդ առջեւ, որ անտանելի նեղութիւններ կը կրենք կառավարութեան մեր խնուս՝ եւ բարբարոս տաճկաց եւ քիւրդաց ձեռքէն:

Մեր խնուս զասպայի մէջի եղած բարբարոս թուրքի անգթութիւնները, որ կը գործեն կառավարութեան աչքի առաջ: Առաջին. Բլուտ Աւագ մեռնելով, երկու հատ մատաղ աղջիկ թողլով եւ իրենց մօր հովանաւորութեան տակ կ'ապրէին: Կանոնաւոր զօրքը, որ զասպայի մէջ կը մնային, յանկարծ գիշեր մը Մուստաֆա անունով հաւուշ տաս-տասնհինգ զօրքով աղքատ այրի կնոջ տան վրայ յարձակեցան, գիշեր խայտառակելով, իր Լուսիկ աղջիկ առին եւ տարան մի քանի ամիս դաշտ պահելով, նորէն երեւան ելաւ նոցա ահէն, ստիպաւ ըսել՝ տաճիկ եմ:

Երկրորդ. Զրկէյեան Օհանի տան վրայ բանելով, կանոնաւոր զօրքերէն մի անձ, Ահմեդ հաւուշ անունով, իր տասը նափարով փախուց, տարաւ իւր հարիւրապետ Ահմեդ աղայի տան աղջկայ: Հայրն ալ գնաց Հիւսէին բէկ գայմաքամին բողոքեցաւ, ան ալ ըսաւ՝ ... գեաւուր, մի՞թէ քո աղջկայ պահապան եմ: Այդ հարւածի մէջ մէկ ամիս չքաշեց՝ մեռաւ:

Երրորդ. Գանք խուրշուդ բէկի տան ըրած բարբարոսութիւններին, որ կը կրեն զասպայի մէջ, անպատմելի է: Իգաբ բէկ իր կողմէն, խոսրով բէկ իր կողմէն, Սըհը բէկ իր կողմէն իրենց ծառաներ կը զրկեն խանութներ, իրենց տան պիտոյքներն կ'առնին կը տանին, երբ անոնք ստակ կ'ուզեն, անոնց գեաւուր կրսն եւ խաչ հայհոյելով կրսն՝ մենէ՞ ստակ կուզէք:

Չորրորդ. Գալով Ալի աղայի տան մարդոց բարբարոսութեան, որ կրնեն զասպայի մէջ՝ Սաիդ էֆենդին իր կողմէն, Մահմուդ աղէն իր կողմէն, Օմար աղան իր կողմէն, ինչու աղան իր կողմէն, Ճապին էֆենդին իր կողմէն, Յուսուֆ աղան իր կողմէն, անոնք ալ իրենց տան համար ինչ պէտքութիւններ որ ունին, կ'իջնան խանութներ, կ'առնեն, երբ որ ստակ կ'ուզեն հայր, գեաւուր ըսելով, խաչ քրկելով՝ Հլլա մենէ՞ ստակ կուզէք. հլլա ինչեր պիտի տենաք մեր ձեռքերէն:

Հինգերորդ. Տալիքի աղայի եւ Մահմուդ աղայի տղայ Շուքրի աղայի անգթութիւններն են, որ կը գործեն: Բերդի մէջ մէկ գիշեր գնացին խաւարատեան Մկրտիչ աղային վրայ, եթէ յիսուն ոսկի կը տաս, քեզի չենք սպաներ, եթէ չի տաս՝ կը սպաննք: Այն ալ ճարահատեալ մնալով, քսան ոսկի տւաւ, իր անձը ազատեց: Գալով միւս օրն ալ բռնեցին խաւարատեան Բարսեղ աղայի տան վրայ, եթէ մեզի երսուն ոսկի եւ տաս սոմար ցորեն կու տաս նէ, քեզի չենք սպաներ, եթէ չես տա՝ կը սպաննք: Ճարը կտրաւ տասնհինգ ոսկի եւ չորս սոմար ցորեն տւաւ՝ զինքն ազատեց: Ասոր նման, Մահմուդ աղայի ձեռքով եւ խուրշուդ բէկի ձեռքով անպատմելի անգթութիւններ կը գործէին զասպայի մէջ եւ գաւառիս մէջ: Շուքրի աղէն, Մահմուդ աղայի տղան եւ Թառոյի տղայ Դավիթ աղան, Իբրահիմ աղէն, Դավիթ աղայի աղբէր Դայիր աղէն, Ասայի աղայի տղան՝ Ազիզ աղէն, Ալաիէօղ Դայիր աղան, ասոնք մէկ խումբ կազմելով, գիշեր եւ ցերէկ ձիաններ հեծնելով, իրենց զէնքեր իրենց վրայ կապած, հայերու ոչխարներ եւ տաւարներ կ'առնին եւ զօրքին կը տանին, ամեն գիւղին վնաս տվողը ասոնք են: Գալով զայմաղամի ըրածին, երբ բողոքելու կ'երթանք, կրսէ՞ Գեաւուր, սուտ կըսէք եւ նաեւ խաչատուր էֆենդին բռնեց, թէ դու բնկերութեան մարդ ես, (50) ոսկի տուր ինծի, որ քեզ թողնիմ, այն ալ տւաւ, եւ խաչատուր էֆենդին թող տւաւ: Դարձեալ զապիտները զրկեց տիրացուներու Ալեքսան եւ Մուշեղ

էֆենդիներու ետեւ, բերեց բանդը դրաւ եւ ...ըսավ. Գեաւուր, դեռ կը խօսա՞ք: Մի քանի օր վերջ, պատասխանեց անոնց թէ՝ Դուք ընկերութեան մարդ էք, եթէ (100) ոսկի կը տաք, ձեզ կը թողնիմ, եթէ չի տաք, չեմ թողնիր: (100) ոսկի առաւ, թողեց անոնց: Տաս օր վերջը, նորէն բռնեց խաչատուր էֆենդին եւ Արեքսան էֆենդին եւ Մուշեղ էֆենդին, դէպի Կարին ղրկեց: Խաչատուր էֆենդին բանդի մէջ մի քանի օր ետք թոյն տալով սպանեցին: 1894 թ. սեպտեմբերի 15-ին, դայմադամի աղան՝ Հեանի բէկ, մի քանի զօրքով Մելիքեան Գէորգ աղային գիշերով դռան վրայ բռնեցին: Գէորգի Մուշեղի ծոցէն կինը զոռ արին, տարին: Տարին ձեռք ու ոտք կապելով: Դայմադամի երեսէն իր տունը քանդեց, Դարաչորան գիւղ փախաւ: Թատիլաթի համար զապթիաներ գիշերով կ'երթան տներ ման կու գան: Զարկելով՝ Գեաւուր, ձեր էրիկ մարդիկ ու՞ր են: Կնիկ մարդիկ ալ կը պատասխանեն, գնացին աշխատելու, անոնք ալ սրգոյցերով կը ծեծեն, անկողին եւ փախրեղէն առնելով՝ կը տանին խանութներ, կը ծախեն եւ տուրքի ստակը կ'առնեն: Անօթի եւ մերկ են: Այլ բաներ ալ կ'ընեն: Կը դիմեն դայմադամին, ան ալ կը խօսա՞ Գեաւուրներ, թագաւորին տուրք չէք ուզեր տալ:

Պաղպասար Նըլոյեանց

6.

ՆՈՐԻՆ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ՎԵՆԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՅ

Տաճկահայկական Բայբուրդ գաւառի ժողովրդից
արքայապառն

Խնդրագիր

Ամենախոնարհաբար խնդրեմք Ձերին Օծութիւնից, որ եւս մեզ հիշէք ազատել տաճկաց բարբառոտութիւնից, որ մինչեւ այսօր երբեք չի հիշուում ոչ լրագիրներում եւ ոչ էլ ձեռագիրներում, միայնակ մնացած անկիւնում Սասնոյ նման տառապում է: Ուստի, մենք, բոլոր աղերսաւորներս խնդրում ենք, առնել Ձեր օրհնութեան ազդեցութեան տակ, իսկ մենք սկսեալ այս օրից եւ վաղուց սպասում ենք ապագային... եւ Ձերին Սրբութեանը երկար կեանք:

Իսկ բռնաբարութիւնները տաճկական նոյնն է, ինչպէս մեր հարեւան եղբայրներինը, որից ստիպւած գաղթեցինք այս դառն օտարութեան՝ վաճառելով մեր ունեցեալ կայքն, գոյքն ու պատիւը: Մենք այստեղ բաղկանում ենք քսան գիւղից գաղթած մարդիկ, իւրաքանչիւր գիւղից կայ քսանամեայ եւ առաւել:

Այս գիւղերը.

- | | | |
|---------------------|------------------|------------------------|
| 1. Քալավրակ50 անձ | 8. Թոմլա10 ,, | 15. Մալասար10 ,, |
| 2. Քասնթա16 ,, | 9. Նուրէ12 ,, | 16. Էրկուն 6 ,, |
| 3. Սուրբ Թորոս34 ,, | 10. Ուսուլի 6 ,, | 17. Ուռումեղ5 ,, |
| 4. Բլրակ12 ,, | 11. Փնջրկա 8 ,, | 18. Բալախիոր10 ,, |
| 5. Առզգա 8 ,, | 12. Կրզու 9 ,, | 19. Էյվարակ10 ,, |
| 6. Վարգահան16 ,, | 13. Օսրիխ 5 ,, | 20. Կին8 ,, |
| 7. Բլուր 9 ,, | 14. Խալիկ15 ,, | 21. Բայբուրդ քաղ.40 ,, |

Աստ ստորագրեմք, Բայբուրդ գաւառի գիւղական եւ քաղաքի ժողովուրդ:

Մարագրութիւններ

7.

8 փետրուարի 1895 թ.
Ի Բաթում
Ղազար Նայրապետեանէ
Կարին քաղաքէ

ՆՈՐԻՆ ՕԾՈՒԹԵԱՆ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ՎԵՆԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ

Աղեքսախաան խնդիր

Ահա լրացաւ վեց ամիս, Կարինից գաղթելու Ռուսիոյ, անիրաւ տաճկի տառապանքից ազատ մնալու համար, որը ցանկանում էր որդուս որպէս զինակիր ընկերութեան, չարաչար սպանել եւ այդ ժամին խոյս տվինք բոլոր գերդաստանով՝ այստեղ ապագայ փրկութեան ... սպասելով: Միայն չունենալով ոչ կարողութիւն եւ ոչ մի զբաղմանց արհեստ, մնացել եմ դառն օտարութեան մէջ: Որովհետեւ որդուս մէկը աշխատանքի անընդունակ է, իսկ դուստրներս մեծացած, հասակներն առած, կինս եւ ես ծերացած...

Ուստի ամենախոնարհաբար խնդրում եմ Ձերին Սրբազնութիւնիցդ մի տեւական օգնութիւն, մինչեւ Հայաստան վերադառնալը: Նաեւ ստորագրեմ:

Ղազար Նայրապետեանց